



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 1106/13

Լիլիթ ՄՈՒՍԵՅԱՆՆ

ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),
2024 թվականի հունիսի 11-ին հանդես գալով Պալատի հետևյալ կազմով՝

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր [Gabriele Kucsko-Stadlmayer]՝ Նախագահ,

Թիմ Այքը [Tim Eicke],

Ֆարիս Վեհաբովիչ [Faris Vehabović],

Բրանկո Լուբարդա [Branko Lubarda],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Անյա Սիբերտ Ֆուա [Anja Seibert-Fohr],

Էն Լուիս Բորմանն [Anne Louise Bormann]՝ դատավորներ,

և Սիմեոն Պետրովսկի [Simeon Petrovski]՝ Բաժանմունքի քարտուղարի
տեղակալ,

հաշվի առնելով 2012 թվականի դեկտեմբերի 21-ին ներկայացված վերոնշյալ
գանգատը,

հաշվի առնելով պատասխանող Կառավարության կողմից ներկայացված դիտարկումները եւ դիմումատուների կողմից ի պատասխան ներկայացված դիտարկումները,

անցկացնելով խորհրդակցություն, որոշեց հետեւյալը.

ՓԱՍՏԵՐԸ

1. Դիմումատուն՝ տկն Լիլիթ Մուսեյանը, Հայաստանի քաղաքացի է, ծնվել է 1971 թվականին եւ ապրում է Երեւանում: Նրան Դատարանում ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Ա. Ղազարյանը:

2. Հայաստանի կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ այնուհետեւ՝ Միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

Ա. Գործի փաստական հանգամանքները

3. Կողմերի կողմից ներկայացված գործի հանգամանքներն ամփոփվում են հետեւյալ կերպ:

1. Գործի նախապայմանությունը

4. 2010 թվականի հոկտեմբերի 25-ին դիմումատուն Ամերիկայի Միացյալ Նահանգներում 14.800 ամերիկյան դոլարով (ԱՄՆ դոլար) գնել է ավտոմեքենա եւ ուղարկել Հայաստան:

5. 2011 թվականի հունվարի 19-ին դիմումատուի ավտոմեքենան ժամանել է Հայաստան:

6. Դիմումատուն պնդում է, որ նույն օրը մաքսատանն իր ներկայացուցչին նախազգուշացրել են, որ եթե մաքսային հայտարարագիր չներկայացվի, եւ

10 օրվա ընթացքում ավտոմեքենան չմաքսագերծվի, ապա Մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն (ՄՕ, տե՛ս ստորել՝ 28-րդ պարբերությունը), կարող է առաջանալ պատասխանատվություն:

7. 2011 թվականի հունվարի 20-ին եւ 21-ին դիմումատուն հարցումներ է ուղարկել Պետական եկամուտների կոմիտե (Կոմիտե) ՄՕ-ի 128-րդ հոդվածում նշված տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրման կարգը սահմանող կանոններ ներկայացրած մարմնի անվանման (տե՛ս ստորել՝ 25-րդ պարբերությունը) եւ նման կանոններ պարունակող օրենքի մասին: Նա նաեւ պարզաբանել է, որ հետաքրքրվում է ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող կանոնների մասին:

8. 2011 թվականի հունվարի 25-ին դիմումատուն Կոմիտեին ուղարկել է մեկ այլ գրություն՝ պնդելով, որ ՄՕ-ի 128-րդ հոդվածում նշված կարգը, որը, ըստ էության, նորմատիվ իրավական ակտ է, չի հրապարակվել որեւէ պաշտոնական տեղեկագրում: ՄՕ-ի 132-րդ հոդվածի 2-րդ մասով (տե՛ս ստորել՝ 27-րդ պարբերությունը) նախատեսված ավտոմեքենա ներմուծելիս մաքսային հայտարարագիր ներկայացնելու մասին պահանջն ուժի մեջ էր մտնելու միայն, երբ վերադաս մաքսային մարմինն ընդունելու եւ հրապարակել ՄՕ-ի 128-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում նշված կարգը: Հետեւաբար նա չունեի պարտավորություններ՝ համաձայն ՄՕ-ի 132-րդ հոդվածի 2-րդ մասի, այդ թվում՝ մաքսատուրքերի եւ ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություն, քանի դեռ չկար պաշտոնապես հրապարակված մաքսային հայտարարագիր ներկայացնելու կարգ, որը կկիրառվեր ֆիզիկական անձանց նկատմամբ: Չնայած դրան՝ նրա համար անհնար էր ավտոմեքենան գրանցել ճանապարհային ոստիկանությունում, քանի որ նա չէր կարողացել նրանց տրամադրել մաքսային մարմինների կողմից վավերացված մաքսային հայտարարագիր: Ավելին, մաքսային հայտարարագրի ներկայացման տասնօրյա ժամկետի ավարտից հետո՝ 2011 թվականի հունվարի 29-ին, նա ենթարկվել է քրեական պատասխանատվության, եւ մեքենան առգրավվել է: Նա խնդրել է Կոմիտեին

տրամադրել իրեն այն ամենը, ինչն իրեն անհրաժեշտ կլինի, որպեսզի մինչեւ այդ օրն ավտոմեքենան գրանցվեր Ճանապարհային ոստիկանությունում:

9. 2011 թվականի հունվարի 27-ին եւ 31-ին Կոմիտեն պատասխանել է դիմումատուի գրություններին՝ նշելով, որ ՄՕ-ի 128-րդ հոդվածում նշված կարգը սահմանվել է Մաքսային վարչության 1998 թվականի հունիսի 12-ի թիվ 71-ՄՎՐ հրամանով (Հրաման), որը հրապարակվել է 1998 թվականի հուլիսի 16-ին (տե՛ս ստորել՝ 32-րդ պարբերությունը):

10. 2011 թվականի հունվարի 31-ին դիմումատուի կողմից ներգրավված մաքսային բրոքերային ընկերությունը դիմումատուի անունից Կոմիտե է ներկայացրել մաքսային հայտարարագիր՝ նշելով նրա ավտոմեքենայի մաքսային արժեքը՝ 14.800 ԱՄՆ դոլար:

11. Ըստ դիմումատուի՝ մաքսային ծառայողը մաքսային հայտարարագրի վրա ձեռագիր գրել է «17.020», այս թիվը եղել է ավտոմեքենայի մաքսային արժեքը ԱՄՆ դոլարով, որը սահմանվել է այդ ծառայողի կողմից: Պարզվում է, որ մաքսային բրոքերային ընկերությունն այնուհետեւ կրկին ներկայացրել է մաքսային հայտարարագիրը՝ որպես մեքենայի մաքսային արժեք նշելով մաքսային ծառայողի կողմից հայտարարագրի բնօրինակի վրա գրված թիվը: Նորից ներկայացված հայտարարագրի հիման վրա դիմումատուն վճարել է 1.356.454 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկ եւ 616.570 ՀՀ դրամ մաքսատուրք:

12. Նույն օրը Կոմիտեն դիմումատուին տրամադրել է վկայական, որով հաստատվում է, որ նա վճարել է իր ավտոմեքենայի համար անհրաժեշտ բոլոր վճարները, ինչպես պահանջվել է ճանապարհային ոստիկանության կողմից՝ ավտոմեքենան գրանցելու համար:

2. *Դիմումագրուի կողմից հարուցված վարույթը*

ա) Վարչական դատարանում

13. 2011 թվականի ապրիլի 21-ին դիմումատուն Վարչական դատարանում Կոմիտեի դեմ վարույթ է հարուցել՝ պնդելով, որ իր գույքին վերաբերող հարցերին

միջամտությունն օրենքով նախատեսված չի եղել: Մասնավորապես նա պնդել է, որ իրեն նախազգուշացրել են, որ պատասխանատվություն էր կրելու ՄՕ-ի 203-րդ հոդվածի խախտման համար (տե՛ս ստորել՝ 28-րդ պարբերությունը), եթե նա չներկայացներ ավտոմեքենան ներմուծելու մասին մաքսային հայտարարագիր, սակայն չի կարողացել կատարել այդ պարտավորությունը, քանի որ Հայաստանում չի գործել օրենք, որով նախատեսվում էր նման հայտարարագիր ներկայացնելու կարգ, ինչպես նշված է ՄՕ-ի 128-րդ հոդվածում (տե՛ս ստորել՝ 25-րդ պարբերությունը): Կոմիտեի կողմից նշված Հրամանը (տե՛ս վերետում՝ 9-րդ պարբերությունը, եւ ստորել բերված՝ 32-րդ պարբերությունը) ընդունվել է 1993 թվականի նախկին ՄՕ-ի համաձայն եւ դադարել է գործել, երբ այդ ՄՕ-ն ճանաչվել է ուժը կորցրած եւ 2001 թվականին փոխարինվել է նոր ՄՕ-ով: Ավելին, նույնիսկ եթե Հրամանն ուժի մեջ լիներ, այն կիրառելի էր միայն ընկերությունների եւ անհատ ձեռնարկատերերի, բայց ոչ ֆիզիկական անձանց նկատմամբ: Դիմումատուն պնդել է, որ մաքսային հայտարարագիր ներկայացնելու կարգի բացակայության դեպքում չի ունեցել այն ներկայացնելու պարտավորություն, եւ իրեն ստիպելն անօրինական է եղել: Ավելին, քանի որ Կոմիտեն չէր պատասխանել նրա այն հարցմանը, որով նրան պետք է տրամադրվեր այն ամենը, ինչ իրեն անհրաժեշտ կլինի իր ավտոմեքենան գրանցելու համար (տե՛ս վերետում՝ 8-րդ պարբերությունը՝ վերջում), լուրջ հետեանքներից խուսափելու համար նա այլ տարբերակ չուներ, քան մաքսային հայտարարագիր ներկայացնելը եւ 1.982.024 ՀՀ դրամ (տե՛ս վերետում՝ 11-րդ պարբերությունը) վճարելը, որը չուներ որեւէ իրավական հիմք: Դիմումատուն պահանջել է հայտարարություն առ այն, որ Կոմիտեն գործել է անօրինական՝ պարտավորեցնելով իրեն վճարել մաքսատուրքերը եւ չտրամադրելով իրեն ավտոմեքենան գրանցելու համար անհրաժեշտ ամեն ինչ՝ առանց այդ վճարները վճարելու:

14. 2011 թվականի հուլիսի 13-ին Վարչական դատարանում տեղի ունեցած նիստի ժամանակ դիմումատուն նշել է, որ եթե Կոմիտեի վիճարկվող

գործողություններն օրինական ճանաչվեն, ապա նա կպահանջի հայտարարություն առ այն, որ մաքսային ծառայողի կողմից անօրինական է եղել «17.020» թիվը իր մաքսային հայտարարագրում նշելը (տե՛ս վերելում՝ 11-րդ պարբերությունը), որի արդյունքում նա պարտավորվել է վճարել 257.362 ՀՀ դրամ ավելի մաքսային վճար, քան եթե ավտոմեքենան համապատասխան կերպով գնահատվեր 14.800 ԱՄՆ դոլար:

15. 2011 թվականի նոյեմբերի 9-ին Վարչական դատարանը մերժել է դիմումատուի պահանջը: Վարչական դատարանը վճռել է, որ ՄՕ-ի 25-րդ, 97-րդ եւ 98-րդ հոդվածներով եւ «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածով (տե՛ս ստորեւ՝ 22-24-րդ եւ 30-րդ պարբերությունները) բոլորից պահանջվում է վճարել մաքսատուրքեր, այդ թվում՝ մաքսատուրքերը եւ ավելացված արժեքի հարկը՝ ապրանքները «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» ռեժիմով Հայաստան ներմուծելիս, եւ որ այդ պարտավորությունը կատարելու պահանջը կախված չի եղել վարչական մարմնի գործողություններից: Հետեւաբար դիմումատուից պահանջվում էր կատարել այդ պարտավորությունը՝ անկախ մաքսային մարմինների գործողություններից կամ անգործությունից: Դատարանը մերժել է դիմումատուի այն փաստարկը, որ նա պարտավոր չէր մաքսային հայտարարագիր ներկայացնել եւ իրավունք ուներ առանց դրա ստանալու իր ավտոմեքենան գրանցելու համար անհրաժեշտ վկայականը: Այն որոշել է, որ եթե անգամ օրենքով չի սահմանվել մաքսային հայտարարագրի ձեւ, ապա դիմումատուն պետք է տեղյակ լիներ վերը նշված օրենսդրությունից, համաձայն որի նա պարտավոր էր վճարել մաքսատուրքեր եւ ավելացված արժեքի հարկ: Դիմումատուի կողմից մաքսատուրքերի եւ ավելացված արժեքի հարկի վճարումը պահանջվում էր ոչ թե վարչական մարմնի գործողություններով, այլ ներպետական օրենսդրությամբ: Անդրադառնալով ՄՕ-ի 128-րդ, 130-րդ եւ 132-րդ հոդվածներին (տե՛ս ստորեւ բերված՝ 25-27-րդ պարբերությունները), որոնցով սահմանվում է մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն, դատարանը նշել է, որ մաքսային հայտարարագրերը գործնականում

ներկայացվել են այդ Հրամանով սահմանված կարգով (տե՛ս ստորեւ՝ 32-րդ պարբերությունը): Թեեւ դիմումատուն ճիշտ էր, երբ պնդում էր, որ ավտոմեքենան ներմուծելու պահին Հրամանը կիրառվել է միայն ընկերությունների եւ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ, այնուամենայնիվ, յուրաքանչյուրն իրավունք է ունեցել ապրանքներ եւ տրանսպորտային միջոցներ ներմուծելու Հայաստան: Հրամանի համապատասխան դրույթները հետեւաբար փոփոխվել են Կոմիտեի՝ 2011 թվականի 22-Ն (տե՛ս ստորեւ՝ 33-րդ պարբերությունը) Հրամանով, որպեսզի այն կիրառվեր բոլորի նկատմամբ: Դիմումատուն ճիշտ էր նաեւ, երբ պնդում էր, որ Հրամանն ընդունվել է ՄՕ-ի համաձայն, որն այլեւս ուժի մեջ չէր: Սակայն ներմուծված տրանսպորտային միջոցը հայտարարագրելու պարտավորությունը բխում էր ոչ թե գործադիր որոշումից, այլ ՄՕ-ից: Այն փաստը, որ դիմումատուն տեղյակ չէր, թե ինչ ձեւաչափով պետք է ներկայացվեր հայտարարագիրը, հիմնավոր պատճառ չէր ՄՕ-ով սահմանված պարտավորությունը չկատարելու համար: Իրավիճակն առավելագույնը կարող էր հանգեցնել նրան, որ դիմումատուն ենթադրեր, որ ինքը կարող է ցանկացած ձեով հայտարարագիր ներկայացնել: Ավելին, դիմումատուն, ի վերջո, ներկայացրել է իր հայտարարագիրը՝ կիրառելով Հրամանով սահմանված կարգը, որն ի սկզբանե հասանելի է եղել նրան: Հետեւաբար նրա կողմից նշված Հրամանի թերությունները չեն խանգարել նրան կատարել իր օրինական պարտավորությունները, այլ միայն որոշակի դժվարություններ են ստեղծել մաքսային մարմինների համար: Ընդհանուր առմամբ դիմումատուի՝ մաքսային վճարներ վճարելու պարտավորությունը բխում էր օրենքից, եւ Կոմիտեի համար օրինական էր դիմումատուին վկայական չտրամադրել, եթե նա մաքսային մարմիններում չհայտարարագրեր տրանսպորտային միջոցը:

բ) Վարույթը վերաքննիչ վարչական դատարանում

16. 2011 թվականի դեկտեմբերի 8-ին դիմումատուն բողոք է ներկայացրել: Ի լրումն իր նախնական դիմումում բերված փաստարկների (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը)՝ դիմումատուն պնդել է, որ Վարչական դատարանը

չի անդրադարձել այն փաստին, որ նրանից պահանջվել է ավելի շատ մաքսային վճարներ վճարել, քան պետք է վճարվեր, եթե ավտոմեքենայի գործարքի գինը ընդունվեր որպես դրա մաքսային արժեք (տե՛ս վերելում՝ 14-րդ պարբերությունը): Նա պնդել է նաեւ, որ իր գործով Հրամանի կիրառումը հակասում էր նույն հանգամանքներով մեկ այլ գործով ավելի վաղ կայացված՝ Վարչական դատարանի որոշմանը, որում դատարանը գտել էր, որ Հրամանը կիրառելի չէր ֆիզիկական անձանց նկատմամբ:

17. 2012 թվականի մարտի 20-ին Վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի բողոքը եւ քննող դատարանի որոշումը թողել է անփոփոխ: Ինչ վերաբերում է նրա փաստարկին, որ առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել այն փաստը, որ նա ենթադրաբար ստիպված է եղել վճարել ավելորդ մաքսատուրքեր, Վերաքննիչ վարչական դատարանը նշել է, որ այս հարցը ենթակա չէ դատարանների կողմից քննության, քանի որ դիմումատուն վիճարկել է մաքսային հայտարարագիր ներկայացնելու նրա պարտավորության օրինականությունը եւ կասկածի տակ չի դրել մաքսային արժեքի օրինականությունը կամ դրա որոշման եղանակը: Մաքսատուրքի եւ ավելացված արժեքի հարկի չափերը չեն վիճարկվել: Ընդ որում, համապատասխան մաքսատուրքերն արդեն վճարվել են: Ի վերջո, ինչ վերաբերում է իր գործով եւ նախորդ գործով Հրամանի կիրառությունների միջեւ անհամապատասխանությունների վերաբերյալ դիմումատուի փաստարկին, ապա այս փաստարկն անհիմն էր, քանի որ երկու գործերի հանգամանքները նույնական չեն եղել:

գ) Վարույթը Վճռաբեկ դատարանում

18. 2012 թվականի ապրիլի 19-ին դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք:

19. 2012 թվականի հունիսի 6-ին Վճռաբեկ դատարանը դիմումատուի վճռաբեկ բողոքը հայտարարել է անընդունելի՝ հիմքերի բացակայության

պատճառով: Այդ որոշմանը դիմումատուն ծանոթացել է 2012 թվականի հունիսի 22-ին:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Ա. 1995 թվականի Սահմանադրությունը (2005 թվականի նոյեմբերի 27-ին ներկայացված փոփոխություններից հետո)

20. Սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանվում է, որ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով եւ չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»:

Բ. Մաքսային օրենսգիրք (2001)

1. Ներմուծվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մասով մաքսային վճարներ եւ մաքսային հայտարարագիր ներկայացնելու պահանջ

21. ՄՕ-ի 6-րդ հոդվածով սահմանվում է, որ Հայաստանում մաքսային գործի ղեկավարումը, կազմակերպումն ու վերահսկողությունն իրականացնում է պետական լիազոր մարմինը (այսուհետ՝ վերադաս մաքսային մարմին):

22. 25-րդ հոդվածով սահմանվում է, որ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» ռեժիմը ապրանքների եւ տրանսպորտային միջոցների ներմուծումն է Հայաստանի տարածք՝ առանց հետագա արտահանման պարտավորության: Այս ռեժիմի համաձայն գանձվում են մաքսային վճարներ:

23. 97-րդ հոդվածով սահմանվում է, որ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս մաքսային մարմինների կողմից գանձվում են մաքսային վճարներ, այդ թվում՝ մաքսատուրքեր, հարկեր եւ մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված այլ պարտադիր վճարներ:

24. 98-րդ հոդվածով նախատեսվում է, որ Մաքսատուրքերը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար ՄՕ-ով սահմանված կարգով եւ չափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճարներ են:

25. 128-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսվում է, որ ապրանքները եւ տրանսպորտային միջոցները՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ենթակա են հայտարարագրման տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսատներում կամ մաքսային կետերում վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով, եթե, ի թիվս այլնի, դրանք տեղափոխվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով: Մաքսային հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած ձեռով՝ գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ նշելով ճշգրիտ տեղեկություններ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաեւ մաքսային հսկողության եւ ձեւակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

26. 130-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանվում է, որ մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին է ներկայացվում ապրանքներ եւ դրանք տեղափոխող տրանսպորտային միջոցներ ներմուծելիս՝ ներմուծելուն հաջորդող տասնօրյա ժամկետում:

27. 132-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ հայտարարատուն պարտավոր է, ի թիվս այլնի, իրականացնել ապրանքների եւ տրանսպորտային միջոցների հայտարարագրում՝ սույն օրենսգրքով նախատեսված կարգով:

28. 203-րդ հոդվածով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները եւ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձեռով չհայտարարագրելը, ինչպես նաեւ հայտարարագրումը ոչ իրենց անվանմամբ՝ հանցագործության հատկանիշների

բացակայության դեպքում առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

2. Ներմուծվող ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի որոշում

29. ՄՕ-ի 87-րդ եւ 89-93-րդ հոդվածներով սահմանվում են ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդները: 87-րդ հոդվածով սահմանված հիմնական մեթոդը ապրանքի գործարքի գնի մեթոդն է, մինչդեռ մյուս մեթոդները, որոնք սահմանված են 89-93-րդ հոդվածներով, կիրառվում են միայն, եթե համաձայն 88-րդ հոդվածի՝ մաքսային մարմինը չի ընդունում ներմուծվող ապրանքի գործարքի գինը որպես որոշված մաքսային արժեքի հիմք:

Գ. «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքը (1997թ.)

30. «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվում է, որ այն գործարքները, ինչպիսիք են «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը) ենթակա են ավելացված արժեքով հարկման:

Դ. «Իրավական ակտերի մասին» օրենքը (2002-2018)

31. «Իրավական ակտերի մասին» օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, որը գործում էր այն ժամանակ, նախատեսվում է, որ օրենսգրքի գործողության ժամկետը լրանալուց հետո լրանում է նաեւ այդ օրենսգրքի հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի գործողության ժամկետը, եթե այլ բան նախատեսված չէ օրենսգրքով:

Ե. Մաքսային վարչության թիվ 71-ՄՎՐ հրամանը

32. «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով փոխադրվող ապրանքների բեռնային մաքսային հայտարարագրման, ըստ բացթողման մաքսային ռեժիմների բեռնային մաքսային հայտարարագրի լրացման կարգը հաստատելու մասին» Մաքսային վարչության թիվ 71-ՄՎՐ հրամանով (ընդունվել է 1998 թվականի հունիսի 12-ին) ներկա պահին սահմանվում է մաքսային հայտարարագիր ներկայացնելու կարգը: Այն ներառել է ցուցումներ, թե ինչպես ներկայացնել հայտարարագիր եւ ինչպես լրացնել մաքսային հայտարարագրի ձեւը: Երկրորդ մասի 1-ին կետով սահմանվում է, որ այս կարգը տարածվում է Հայաստանի ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների եւ անհատ ձեռներեցների վրա:

Զ. Պետական եկամուտների կոմիտեի թիվ 22-Ն հրամանը

33. Սույն Հրամանով, որն ընդունվել է 2011 թվականի հունվարի 26-ին եւ ուժի մեջ է մտել 2011 թվականի մարտի 11-ին, փոփոխվել է թիվ 71-ՄՎՐ հրամանը (տե՛ս վերելում՝ 32-րդ պարբերությունը)՝ այն կիրառելի դարձնելով բոլորի նկատմամբ:

ԲՈՂՈՔՆԵՐԸ

34. Դիմումատուն բողոքել է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, որ միջամտություն է եղել իր գույքից անարգել օգտվելու իրավունքին, մասնավորապես՝ իր ներկրված ավտոմեքենայից մաքսատուրքերի գանձումը, եւ որ դա սահմանված չի եղել օրենքով, քանի որ այն ժամանակ Հայաստանը չի ունեցել օրենք, որով կսահմանվեր ֆիզիկական անձանց կողմից մաքսային հայտարարագիր ներկայացնելու կարգը, ինչպես նշված է ՄՕ-ի 128-րդ հոդվածում (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը): Նա նաեւ բողոքել է, որ մաքսային ծառայողի կողմից իր ավտոմեքենայի մաքսային արժեքը որոշելը կամայականորեն ավելացրել է մաքսային վճարների չափը:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

35. Դիմումատուն բողոքել է, որ իր գույքից օգտվելու իրավունքին միջամտությունը եղել է անօրինական՝ հակասելով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջներով նախատեսված երաշխիքներին, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից՝ բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում, ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Կողմերի փաստարկները

1. Կառավարությունը

36. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Նրանք պնդել են, որ Դատարանում դիմումատուի բողոքը բաղկացած է եղել երկու մասից, եւ որ նա ներպետական վարույթի ընթացքում չի կարողացել հստակորեն հաստատել այն եւ ներկայացնել: Մասնավորապես նրա բողոքի առաջին բաղադրիչն անդրադարձել է իր տրանսպորտային միջոցի համար մաքսային մարմնին հայտարարագիր ներկայացնելու պարտավորությանը, մինչդեռ երկրորդ բաղադրիչն անդրադարձել է այդ տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի որոշման չափին եւ մեթոդին:

37. Ինչ վերաբերում է մաքսային հայտարարագիր ներկայացնելու եւ մաքսատուրքեր վճարելու պարտավորությանը, ապա դիմումատուի դատական գործը, ըստ էության, վերաբերել է Կոմիտեի կողմից ավտոմեքենան գրանցելու համար պահանջվող վկայական ստանալու նրա հարցումը մերժելուն: Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն պետք է գործ հարուցեր այդ մերժումը վիճարկելու համար, այլ ոչ թե անորոշ կերպով վիճարկեր Կոմիտեի որոշ գործողություններն ու անգործությունը: Նրա հարուցած գործը եւ այն գործը, որը պետք է հարուցեր, երկու տարբեր տեսակի գործեր էին: Քանի որ նա չէր հետեւել ճիշտ կարգին, դիմումատուի դիմումը ներպետական օրենսդրության համաձայն հաջողության հեռանկարներ չի ունեցել:

38. Ինչ վերաբերում է դիմումատուի ավտոմեքենայի մաքսային արժեքի որոշմանը, եթե նա համարել է, որ դա անօրինական կերպով է որոշվել, ապա հնարավորություն է ունեցել դա վիճարկելու վերադաս մաքսային մարմնում կամ դատարաններում: Նա կարող էր չհամաձայնել մաքսային ծառայողի կողմից տրված գնահատման հետ եւ պնդել, որ գնահատումը լինի այնպես, ինչպես նշված էր իր նախնական մաքսային հայտարարագրում: Եթե այն մերժվեր, ապա նա կարող էր այդ մերժումը վիճարկել դատարաններում: Ամեն դեպքում իր ներպետական դատարանում դիմումատուն չի վիճարկել մաքսային ծառայողի գնահատումը, այլ միայն պնդել է, որ չի եղել մաքսային վճարներ վճարելու որեւէ պարտավորություն: Կառավարությունը պնդել է, որ դրանք երկու առանձին հարցեր են՝ առանց որեւէ պատճառահետեւանքային կապի, ուստի պետք է առանձնացվեին որպես առանձին պահանջներ: Մաքսային ծառայողի կողմից իրականացված ենթադրյալ անօրինական մաքսային գնահատման հետ կապված փաստական հանգամանքները (տե՛ս վերելում՝ 14-րդ պարբերությունը) չեն նշանակում, որ դիմումատուն լրացուցիչ պահանջ է ներկայացրել: Մաքսային գնահատումը որոշվել է ՄՕ-ի կողմից սահմանված հատուկ կարգով (տե՛ս վերելում՝ 29-րդ պարբերությունը), եւ այդ հարցը որեւէ կերպ չէր կարող լուծվել դիմումատուի կողմից մաքսային հայտարարագիր ներկայացնելու

պարտավորության օրինականության վերաբերյալ գործով: Հետևաբար ներպետական դատարանները չեն ունեցել այդ հարցը քննելու իրավասություն:

39. Կառավարությունն այնուհետև նշել է, որ դիմումատուն չի կարող պնդել, որ ինքը դարձել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ենթադրյալ խախտման զոհ, քանի որ նա կամավոր կերպով է ներկայացրել մաքսային հայտարարագիր եւ վճարել պահանջվող վճարները, ինչը գրկել է նրան տուժողի կարգավիճակից: Ավելին, դիմումատուի բողոքներն ակնհայտորեն անհիմն էին: Մասնավորապես հաշվի առնելով Պայմանավորվող պետությունների կողմից հարկման քաղաքականություն ձեւավորելու եւ որդեգրելու հարցում գնահատման լայն շրջանակը՝ Կոմիտեի ենթադրյալ գործողություններով ու անգործությամբ չեն խախտվել դիմումատուի՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի եւ հարկերի վճարումն ապահովելու հանրային շահի հավասարակշռությունը:

40. Ինչ վերաբերում է դիմումատուի բողոքների էությանը, ապա Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի՝ իր ավտոմեքենան ներմուծելու համար մաքսատուրքեր եւ հարկեր վճարելու պարտավորությունը սահմանված է Սահմանադրությամբ եւ ՄՕ-ով: Վճարները պետք է վճարվեին դիմումատուի կողմից՝ համաձայն կիրառվող ներմուծման ռեժիմի: Կառավարությունը վիճարկել է դիմումատուի պնդումն առ այն, որ Հրամանը (տես վերելում՝ 32-րդ պարբերությունը) այլեւս ուժի մեջ չի եղել, երբ նա ներմուծել է իր ավտոմեքենան՝ պնդելով, որ այն ուժի մեջ է մնացել նույնիսկ նոր ՄՕ-ի ընդունումից հետո, եւ որ ամեն դեպքում դիմումատուն չի ազատվել մաքսային հայտարարագիր ներկայացնելու իր պարտականությունից: Ավելին, թե՛ ՄՕ-ն, թե՛ Հրամանը եղել են հրապարակված օրենսդրական փաստաթղթեր եւ հասանելի են եղել հանրությանը: Մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունը պետք է կանխատեսելի լիներ դիմումատուի համար, քանի որ ՄՕ-ի վերը նշված մեկնաբանությամբ Հայաստան են ներմուծվել հարյուրավոր ավտոմեքենաներ: Կառավարությունը նաեւ վիճարկել է դիմումատուի այն պնդումը, որ հայտարարագիր տալու համար չի եղել հասանելի ձեւ՝ նկատի ունենալով այն

փաստը, որ նա, ի վերջո, ներկայացրել է մաքսային հայտարարագիր ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց համար օգտագործվող ձեռով: Հայտարարագրի վերին ծախս անկյունում նշվել է «ֆիզիկական» բառը, որից ենթադրվում էր, որ այն նախատեսված է եղել ֆիզիկական անձանց համար: Եզրափակելով հարկ է նշել, որ դիմումատուի ավտոմեքենայի մասով մաքսային հայտարարագիր ներկայացնելը եւ դրան հաջորդող մաքսատուրքեր եւ հարկեր վճարելը համապատասխանում էին ներպետական օրենսդրության պահանջներին:

2. *Դիմումագրուն*

41. Պատասխանելով Կառավարության՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու պահանջին՝ դիմումատուն պնդել է, որ վիճարկել է Կոմիտեի գործողություններն ու անգործությունը ներպետական դատարաններում: Եթե Կոմիտեի գործողությունների եւ անգործության դեմ նրա պահանջները ճիշտ չներկայացվեին, ապա ներպետական դատարանները դրանք չէին ընդունի քննության: Դիմումատուն պնդել է, որ ներպետական վարույթը վերաբերում էր չորս հստակ պահանջներին, որոնք վերաբերում էին Կոմիտեի գործողությունների եւ անգործության օրինականությանը: Բոլոր այդ պահանջներն ընդունվել են, եւ դրանց էությունը քննվել է դատարանների կողմից: Հետեւաբար նա դիմել էր իր գույքի նկատմամբ սեփականության իրավունքների դատական պաշտպանությանը եւ իր գործը քննել բոլոր երեք դատական աստիճաններում, որոնք կարող էին իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ապահովել: Նա այդպիսով սպառել էր իրավական պաշտպանության ներպետական միջոցները, որոնք հասանելի էին, մատչելի եւ արդյունավետ:

42. Դիմումատուն այնուհետեւ պնդել է, որ իր կողմից մաքսային հայտարարագիր ներկայացնելը կամավոր չի եղել, ինչպես պնդում է Կառավարությունը (տե՛ս վերելում՝ 39-րդ պարբերությունը): Եթե նա մաքսային հայտարարագիր չի ներկայացրել, ապա նա ռիսկի կգնար, որ իր ավտոմեքենան զգալի ժամանակահատվածով կառգրավվեր, կտուգանվեր եւ նույնիսկ քրեական

պատասխանատվության կենթարկվել: Հետեւաբար նա կարող էր պնդել, որ նա դարձել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման զուգ: Ավելին, հաշվի առնելով գործի հանգամանքները՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի եւ հարկերի վճարումն ապահովելու հանրային շահի միջեւ արդար հավասարակշռությունը խախտվել էր Կոմիտեի կողմից, եւ հետեւաբար նրա բողոքն ակնհայտորեն անհիմն չէր:

43. Ինչ վերաբերում է նրա բողոքների էությանը, ապա դիմումատուն պնդել է, որ իր գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտությունն օրենքով նախատեսված չի եղել: Մասնավորապես ՄՕ-ի 128-րդ հոդվածով (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը) նշվում է, որ մաքսային հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով եւ ձեւով: Այդ հոդվածը կիրարկող միակ կարգը, որն ամրագրված է Հրամանով (տե՛ս վերելում՝ 32-րդ պարբերությունը), տվյալ պահին իրավական ուժ չուներ, քանի որ այն ընդունվել էր 1993 թվականի նախկին ՄՕ-ի հիման վրա, եւ գործողության ժամկետը լրացել է, երբ նոր ՄՕ-ն ուժի մեջ է մտել 2001 թվականին: Ավելին, այդ կարգը չի կիրառվել ֆիզիկական անձանց նկատմամբ, եւ չի եղել որեւէ այլ օրենք, որով սահմանվում է ֆիզիկական անձի կողմից մաքսային հայտարարագիր ներկայացնելու կարգ: Հետեւաբար դիրքորոշումն անհասկանալի է եղել, եւ նա չէր կարող ողջամտորեն կանխատեսել, թե արդյոք ուներ մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն, թե՛ ոչ: Միեւնույն ժամանակ, նա դեռեւս պարտավոր էր կատարել տրանսպորտային միջոցների ներմուծման համար ընդհանուր առմամբ գործող պահանջները, նույնիսկ եթե ունեցել է մտադրություն վիճարկելու Կոմիտեի գործողություններն ու անգործությունը, քանի որ հակառակ դեպքում նա կարող էր ենթարկվել վարչական կամ նույնիսկ քրեական պատասխանատվության: Դիմումատուն պնդել է, որ 2011 թվականի հունվարի 26-ի Հրամանը (տե՛ս վերելում՝ 33-րդ պարբերությունը) ընդունվել է ի պատասխան իր գործի, քանի որ իշխանությունները հասկացել են, որ նա բարձրացրել է իրական խնդիր, եւ հետեւաբար կատարել են անհրաժեշտ փոփոխությունները՝

ապագայում նմանատիպ դեպքերը կանխելու համար: Սա վկայել է իրավական որոշակիության բացակայության մասին: Ընդհանուր առմամբ մաքսային հայտարարագիր ներկայացնելու ներպետական կարգավորումները եղել են կամայական, անկանխատեսելի եւ ոչ մատչելի, իսկ նրա գույքային իրավունքներին միջամտությունն օրենքով նախատեսված չի եղել:

Բ. Դատարանի գնահատականը

44. Դատարանը Կառավարության փաստարկի սկզբում ի գիտություն է ընդունում, որ դիմումատուն չի սպառել իր բողոքների մասով իրավական պաշտպանության ներպետական միջոցները՝ համաձայն Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի (տե՛ս վերելում՝ 36-38-րդ պարբերությունները): Այն հղում է կատարում այս կապակցությամբ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իր նախադեպային իրավունքով հաստատված սկզբունքներին, որոնք դիմումատուներից պահանջում են սպառել իրավական պաշտպանության բոլոր արդյունավետ միջոցները նախքան իրենց բողոքները Դատարան ներկայացնելը (տե՛ս Վուչկովիչը եւ այլք ընդդեմ Սերբիայի [ՄՊ] [Vučković and Others v. Serbia [GC]], թիվ՝ 17153/11 եւ 29 այլ վճիռներ, § 69-77, 2014 թվականի մարտի 25, եւ «Communauté genevoise d'action syndicale» (CGAS) ընդդեմ Շվեյցարիայի [ՄՊ] [Communauté genevoise d'action syndicale (CGAS) v. Switzerland], թիվ 21881/20, §§ 138-145, 2023 թվականի նոյեմբերի 27):

45. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը գտնում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված դիմումատուի բողոքը վերաբերում է երկու առանձին հարցերի, այն է՝ մի կողմից՝ իր ավտոմեքենան ներմուծելու մաքսատուրքեր եւ հարկեր վճարելու պահանջի օրինականությանը եւ մյուս կողմից՝ վճարման ենթակա մաքսատուրքերի եւ հարկերի չափը որոշելու մեթոդի օրինականությանը: Դատարանը, այնուամենայնիվ, դիտարկում է, որ նրա կողմից Վարչական դատարան ներկայացված դիմումը վերաբերում էր միայն առաջին հարցին (տե՛ս վերելում՝ 13-րդ

պարբերությունը), եւ հետեւաբար երկրորդ հարցը չի քննվել այդ դատարանի կողմից: Սա ակնհայտորեն ընդունվել է Վերաքննիչ վարչական դատարանի կողմից (տե՛ս վերելում՝ 17-րդ պարբերությունը): Դիմումատուն չի վիճարկել Կառավարության այն փաստարկը, որ այդ հարցի բարձրացումը Վարչական դատարանում լսումների ժամանակ (տե՛ս վերելում՝ 14-րդ պարբերությունը) բավարար չէ, քանի որ դա փաստացի եւ իրավական առումով տարբերվում էր այն հարցից, որը դիմումատուն բարձրացրել էր այդ դատարան ներկայացված իր դիմումում: Այսպիսով հետեւում է, որ դիմումատուն չի կարողացել ներպետական դատարաններում բարձրացնել իր ավտոմեքենայի մաքսային գնահատման ենթադրյալ անօրինականության հարցը՝ ներպետական կանոններին համապատասխան, ինչի հետեւանքով այդ դատարանները չեն քննել այդ հարցը: Դատարանը նաեւ նշում է, որ դիմումատուն որեւէ փաստարկ չի ներկայացրել Կառավարության՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու առարկության այս կոնկրետ ասպեկտի մասով (տե՛ս վերելում՝ 38-րդ եւ 41-րդ պարբերությունները):

46. Համապատասխանաբար Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն ներկայացված դիմումատուի բողոքի այդ մասն անընդունելի է իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու համար եւ պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերի:

47. Ինչ վերաբերում է դիմումատուի կողմից ներմուծված ավտոմեքենայի համար մաքսատուրքերի եւ ավելացված արժեքի հարկի գանձման օրինականությանը, ապա Դատարանը դիտարկում է, որ, ինչպես արդեն նշվել է վերելում, դիմումատուն իր ավտոմեքենայի ներմուծման համար վիճարկել է մաքսային հայտարարագիր ներկայացնելու եւ հետեւաբար այդ հարցով մաքսատուրքեր եւ հարկեր վճարելու իր պարտավորությունը (տե՛ս վերելում՝ 15-րդ եւ 17-րդ պարբերությունները): Վարույթի ընթացքում ոչ մի անգամ դատարանները չեն որոշել, որ դիմումատուն չի հետեւել իր գործը ներկայացնելու ճիշտ կարգին, ինչպես պնդում է Կառավարությունը: Դատարանը հետեւաբար մերժում է Կառավարության՝ իրավական պաշտպանության ներպետական

միջոցները չսպառելու առարկությունը, քանի դեռ խոսքը վերաբերում է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն ներկայացված դիմումատուի բողոքի տվյալ մասին:

48. Դատարանը նշում է, որ Կառավարությունը նաեւ նշել է, որ դիմումատուն չի կարող պնդել, որ ինքը դարձել է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ենթադրյալ խախտման գրի, քանի որ նա կամավոր համաձայնել է վճարել մաքսատուրքեր եւ ավելացված արժեքի հարկ իր ներմուծված ավտոմեքենայի համար (տե՛ս վերետւմ՝ 39-րդ պարբերությունը): Դատարանը, այնուամենայնիվ, անհրաժեշտ չի համարում որոշում կայացնել այս առարկության հարցով, քանի որ այս գանգատն ամեն դեպքում ընդունելի չէ հետեւյալ պատճառաբանություններով:

49. Դատարանը դիտարկում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով դիմումատուի բողոքն այն մասին, որ իրենից պահանջվել է մաքսատուրքեր եւ ավելացված արժեքի հարկ վճարել իր ավտոմեքենայի համար՝ առանց դրա համար օրենքով սահմանված որեւէ կարգի, հիմնված է այն փաստարկի վրա, որ նրա կողմից մաքսային հայտարարագիր ներկայացնելու կարգ չի եղել, ուստի նա պարտավոր չէր դա անել:

50. Դատարանը վերահաստատում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պահանջվում է, որ պետական մարմնի կողմից նրա գույքից անարգել օգտվելու իրավունքին որեւէ միջամտություն պետք է լինի օրինական, այդ հոդվածի առաջին կետի երկրորդ նախադասությունը թույլ է տալիս գույքից զրկել՝ «օրենքով նախատեսված պայմաններին համապատասխան»: Ավելին, օրենքի գերակայությունը, լինելով ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը, ներհատուկ հասկացություն է Կոնվենցիայի բոլոր հոդվածներին (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Վիստինճ և Պերեբոլկինս եւ Պերեայյոկինսն ընդդեմ Լատվիայի [ՄՊ] [*Vistiņš and Perepjolkins v. Latvia* [GC]], թիվ 71243/01, § 95, 2012 թվականի հոկտեմբերի 25): Օրինականության սկզբունքով նաեւ պահանջվում է, որ ներպետական իրավունքի համապատասխան դրույթները

բավականաչափ մատչելի, ճշգրիտ եւ կանխատեսելի լինեն իրենց կիրառման մեջ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Սենտրո Եվրոպա 7 Ս.ռ.Լ-ն եւ Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [*entro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy*] [GC], թիվ 38433/09, § 187, ՄԻԵԿ 2012թ.):

51. Սույն գործում կողմերի միջեւ վեճ չկա այն մասին, որ դիմումատուի ավտոմեքենայի համար սահմանված մաքսատուրքերի գանձումը միջամտություն է եղել նրա գույքից անարգել օգտվելու իրավունքին՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Դատարանը, սակայն, համաձայն չէ դիմումատուի հետ, որ այս միջամտությունն օրինական չի եղել: Այն նշում է, որ Հայաստան ներմուծվող տրանսպորտային միջոցների համար մաքսատուրքեր եւ ավելացված արժեքի հարկ վճարելու պահանջը հստակորեն սահմանվել է ՄՕ-ի 25-րդ եւ 97-րդ հոդվածներով եւ «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետով (տե՛ս վերելում՝ 22-րդ, 23-րդ եւ 30-րդ պարբերությունները): Այդ պահանջն ու դրանից բխող այդ վճարների գանձումը միջամտել են դիմումատուի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքին: Երկու նորմատիվ իրավական ակտերն էլ հասանել են եղել դիմումատուին: Ֆիզիկական անձի կողմից մաքսային հայտարարագիր ներկայացնելու կարգի բացակայությունը կարող էր տեսականորեն խնդիրներ ստեղծել դիմումատուի համար այդ պահանջին համապատասխանելու հարցում, սակայն այն ինքնին չի եղել դիմումատուի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքին միջամտություն կամ դիմումատուի համար միջամտությունն անկանխատեսելի չի դարձրել: Դատարանն այս կապակցությամբ նշում է, որ իրավաբանական անձանց համար հայտարարագիր ներկայացնելու կարգը, ինչպես նշվել է դիմումատուի կողմից, այլեւ ուժի մեջ չի եղել եւ ամեն դեպքում կիրառելի չի եղել նրա՝ ֆիզիկական անձի նկատմամբ, այլ միայն ցուցումներ է պարունակել այն մասին, թե ինչպես ներկայացնել մաքսային հայտարարագիր եւ լրացնել մաքսային հայտարարագրի ձևը, եւ չի սահմանել դիմումատուի՝ մաքսային վճարներ վճարելու պարտավորությունը (տե՛ս վերելում՝ 32-րդ պարբերությունը): Ավելին, թեեւ

տեխնիկապես կիրառելի չէ դիմումատուի՝ որպես ֆիզիկական անձի նկատմամբ այդ կարգը, այնուամենայնիվ, գործնականում կիրառվել է այն ժամանակ, երբ ֆիզիկական անձանց կողմից մաքսային հայտարարագրեր են ներկայացվել: Հետեւաբար դիմումատուն կարողացել է հետել այդ կարգին եւ ներկայացնել իր մաքսային հայտարարագիրը (տե՛ս վերեւում՝ 10-րդ պարբերությունը): Հետեւաբար Դատարանը գտնում է, որ ինչ վերաբերում է դիմումատուի գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտելուն, ապա չի կարելի ասել, որ այդ միջամտությունը սահմանված չէ օրենքով, ինչպես պահանջվում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով:

52. Այսպիսով հետեւում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված հարցով դիմումատուի բողոքի այս մասն ակնհայտ անհիմն է եւ պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի եւ 4-րդ կետի:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

ճանաչում է գանգատն անընդունելի:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2024 թվականի հուլիսի 4-ին:

Սիմեոն Պետրովսկի՝
Քարտուղարի տեղակալ

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր՝
Նախագահ